

ՎԱՐԴԱՎԱՌ

MINISTRY OF CULTURE AND YOUTH AFFAIRS OF REPUBLIC OF ARMENIA

SCIENTIFIC RESEARCH CENTER OF HISTORCAL AND CULTURAL HERITAGE

HUSHARDZAN

(Monument)

ANNUAL

3

PUBLISHING-HOUSE "HUSHARDZAN"
YEREVAN 2005

МИНИСТЕРСТВО КУЛЬТУРЫ И ПО ДЕЛАМ МОЛОДЕЖИ РА

НАУЧНО-ИССЛЕДОВАТЕЛЬСКИЙ ЦЕНТР
ИСТОРИКО-КУЛЬТУРНОГО НАСЛЕДИЯ

УШАРДЗАН

(Памятник)

ЕЖЕГОДНИК

3

ИЗДАТЕЛЬСТВО "УШАРДЗАН"
ЕРЕВАН 2005

ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀՈՒՇԱՐՁԱՆ

ՏԱՓԵԴԻՐՔ

Գ

«ՀՈՒՇԱՐՁԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2005

ՀՏԴ 941
(479.25)
ԳՄԴ 63.3 (2Հ)
Հ 964

ՏՊԱԳՐՎԱԾ Է ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՀԱԿՈԲ ՍԻՄՈՆՅԱՆ (գլխավոր խմբագիր),
ՊԱՐՈՒՅՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ, ՄՈՒՐԱԴ ՀԱՍՐԱԹՅԱՆ, ԿՈՐՅՈՒՆ ՂԱՖԱԴԱՐՅԱՆ,
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՆԱՄՅԱՆ, ՆԵՐՍԵՍ ԿՈՍՏԱՆՅԱՆ (պատասխանատու քարտուղար)

EDITORIAL BOARD

HAKOB SIMONYAN (editor-in-chief),
PARUYR MURADYAN, MURAD HASRATYAN, KORYUN GHAFADARYAN,
HOVHANNES SANAMYAN, NERSES KOSTANYAN (executive secretary)

Հ 964 «Հուշարձան», տարեգիրք Գ,
Երևան, «Հուշարձան» հրատ., 2005

ԳՄԴ 63.3 (2Հ)

ISBN 99930-865-2-5

ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
© *ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մուտք 7

ՏԱՐԵԼԻՑ

ՄՈՒՐԱԴ ՀԱՍՐԱԹՅԱՆ - Արտազի Սբ. Թադեի
վանքի ճարտարապետությունը 11

ԱՐՏԱԿ ՂՈՒԼՅԱՆ - Անիի Մայր տաճարի
հազարամյա խորհուրդը (1001-2001 թթ.) 26

ՀԱՆՁՆՎԱԾ Է ՍԵՐՈՒՆԴՆԵՐԻՆ

Պատմական հուշարձանների պահպանման
հայկական ընկերության 1978 - 2004 թթ. վերականգնած հուշարձանները 41

ՀԱԿՈԲ ՍԻՄՈՆՅԱՆ - Վերաօծված Ծիծեռնավանքը 58

АЙРИС ЕСАЯН - Консервация настенной живописи
в церкви Сурб Акоп в Канакере 64

ՀԵՏԱՁՈՏՈՒՄ

ՍԻՄՈՆ ՀՄԱՅԱԿՅԱՆ - Դովրիի ամրոցը 73

ՆՈՐԱ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ - Հայտնագործումներ Նոր Խաչակապում 80

ՀԱՅԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ - Արամուսի ամրոցը 97

ԻԳԻԹ ՂԱՐԻԲՅԱՆ, ՀԱՅԿ ՀԱԿՈԲՅԱՆ - Բջնի հնավայրը 103

ФЕЛИКС ТЕР-МАРТИРОСЯН - Раскопки Драсханакерта 119

ԱՐԱՄ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ, ՀԱԿՈԲ ՍԻՄՈՆՅԱՆ - Աղցքի հնագիտական արժեքները
(1974-1975 թթ. պեղումների արդյունքները) 140

Հայաստանի Հանրապետությունում 1990-2004 թթ.
պեղված հնագիտական հուշարձանների ցանկ 152

ՆՈՐԱՀԱՅՏ ԱՐԺԵՔՆԵՐ

ՀԱԿՈԲ ՍԻՄՈՆՅԱՆ, ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՆԱՍՅԱՆ - Վանքասարի հուշարձանները 159

ԳԻՏԱՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

ԳՐԻԳՈՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ - Արթիկի Փոքր եկեղեցու
հորինվածքային առանձնահատկությունները 179

ԼԻԼԻԹ ՎԱՐԴԱՆՅԱՆ - Երևանի Գլխավոր պողոտայի կազմավորման
պատմական հիմնավորումը 194

ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ԺԱՆ ՇԱՐԴԵՆ - Ճանապարհորդություն դեպի Պարսկաստան և Արևելքի այլ երկրներ
(Ըստ Լանգլեսի, 1811 թ., (Փարիզ, հատոր 2, էջ 161-170) հրատարակության) 205

ՄԵՐ ԵՐԱԽՏԱՎՈՐՆԵՐԸ

Ակադեմիկոս Վարազդատ Հարությունյան 217

Տարեգրքում օգտագործված հապավումների ցանկ 225

CONTENTS

Introduction 7
Murad Hasratyan - The Architecture of St. Tadeh Monastery in Artaz 11
Artak Ghulyan - The 1000 year Mystery of the Cathedral in Ani 26
Armenian Association for the Protection of Hisorical Monuments -
restored monuments of 1978 - 2004 41
Hakob Simonyan - Re-Consecrated Tsitsernavank 58
Ayris Esayan - Conservation of the Frescos
in the Church of St. Hakob in Kanaker 64
Simon Hmayakyan - The Fortress of Dovri 73
Nora Engibaryan - Excavations in Nor Khachakap 80
Hayk Avetisyan - The Results of
Archaeological Excavations in Aramus (2004) 97
Igit Gharibyan, Haik Hakobyan - Preliminary Results
of Bjni 2003-2004 Excavation 103
Felix Ter-Martirossyan - Excavations in Draskhanakert 119
Hakob Simonyan, Aram Kalantaryan - Archaeological Value of Aghtsek
(Result of the 1974-1975 excavations) 140
List of the Excavated Archaelogical Monuments
in the Republic of Armenia (1990 - 2004) 152
Hakob Simonyan, Hovhannes Sanamyan - An Armenian Early
Christian Cult Complex in the Region of Aldam 159
Grigor Nalbandyan - Compositional Peculiarities
of the Small Church in Artik 179
Lilit Vardanyan - The Historical Basing
of the Main Avenue of Yerevan 194
Jan Sharden - Journey to Persia And Other Countries of the East 205
Academician Varazdat Harutunyan 217
The List of Abbreviations Used in the Annual 225

ՄՈՒՏՔ

«Հուշարձան» տարեգրքի նախորդ՝ Բ հատորը, լույս է տեսել 1993-ին, որից հետո Հանրապետության սոցիալ-տնտեսական և քաղաքական ծանր կացության պատճառով դադարեցվել է գիտական և հասարակական շրջանակներում մեծ պահանջարկ ու հեղինակություն վայելող հայագիտական այս հանդեսի հրատարակումը: Հայաստանի Հանրապետության Կառավարության 23 հուլիսի 2003 թ. N 896 որոշմամբ նորաստեղծ «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը վերապահված գործառույթներից է նաև «Հուշարձան» տարեգրքի պատրաստումն ու հրատարակումը:

Այսպիսով, ավելի քան 10-ամյա ընդմիջումից հետո Հայաստանի Հանրապետության մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնը ձեռնամուխ եղավ «Հուշարձան» տարեգրքի պարբերական հրատարակման գործին: Հաշվի առնելով 1987 թ. և 1993 թ. հրատարակված Ա և Բ տարեգրքերի կառուցվածքային սկզբունքները, մշակվել է «Հուշարձան» Գ տարեգրքի կառուցվածքը, դրանում առաջադրված խնդիրները, կազմվել է խմբագրական խորհուրդ: Որոշվել է պահպանել տարեգրքի նախորդ հրատարակություններում կիրառված չափը և ծավալը: Առաջադրված հարցերը քննարկվել և հավանության են արժանացել Պատմամշակութային ժառանգության գիտական խորհրդի նիստում: Հայաստանի Հանրապետության և արտերկրի հայկական պատմամշակութային անշարժ ժառանգության ուսումնասիրման, վերական-

գնման և պահպանության խնդիրներին նվիրված Տարեգիրքը, ինչպես և նախկինում, նպատակ է հետապնդում հանրությանը ներկայացնել հայկական հուշարձանների հետ առնչվող էական խնդիրները:

Տարեգիրքն անդրադառնում է ճարտարապետական, հնագիտական, ազգագրական, մոնումենտալ արվեստի և տարաբնույթ այլ հուշարձանների ուսումնասիրման, պահպանության, վերականգնման, վերարժևորման, մասսայականացման և հրատապ այլ խնդիրներին, արծարծում է մասնագետ-գիտնականների բարձացրած ոլորտի հրատապ հարցերը: Տարեգրքն ընդգրկում է հնագետների, ճարտարապետների, ազգագրագետների, արվեստաբանների գիտական աշխատություններն ու հաղորդումները, վերլուծական հոդվածներ նվիրված Հայաստանի Հանրապետությունում և արտերկրում հայկական պատմամշակութային ժառանգության ուսումնասիրման և պահպանության խնդիրներին, տեղեկություններ հայագիտական արժեքավոր հրատարակությունների ու գիտաժողովների մասին:

Հաշվի առնելով Տարեգրքի նախորդ հրատարակումից մինչ այժմ տևած երկարատև ընդմիջումը, որի հետևանքով մեկ տասնամյակից ավելի ժամանակահատվածում ըստ հարկի չեն մեկնաբանվել պատմամշակութային անշարժ ժառանգության բնագավառում տեղի ունեցած գործընթացները, Տարեգիրք Գ-ն խնդիր է դրել ներառնել Հայաստանի Հանրապետության անկախացումից ի վեր հուշարձանների ուսումնասիրման և վերականգնման բնագավառների վերաբերյալ ընդհանրացնող հոդվածներ, նախորդ տարիների հետազոտությունների արդյունքները, նախկինում «Հուշարձան» տարեգրքում հրատարակության հանձնված հոդվածները, որոնց հեղինակները համբերությամբ ու հավատով սպասում էին Տարեգրքի վերահրատարակությանը: Այս առումով «Հուշարձան» տարեգրքի Գ հատորը մի ինքնատիպ հաշվետու գիրք է, որը փորձում է ի մի բերել հուշարձանների ուսումնասիրման ու պահպանության բնագավառի աշխատանքները, որոնք իրականացվել են Հայաստանի Հանրապետության անկախության առաջին տասնամյակի տարիներին:

«Հուշարձան» տարեգրքի վերահրատարակումը հնարավոր դարձավ Հայաստանի Հանրապետության Կառավարության ու ՀՀ Մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության աջակցության, Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի աշխատակիցների ու հայագիտության բնագավառի մեր գործընկերների ջանքերի շնորհիվ:

«Հուշարձան» Գ տարեգրքում ընդգրկվել են հոդվածներ 1990-2004 թթ. Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում կատարված հուշարձանների ուսումնասիրման և հաշվառման, հնագիտական պեղումների, վերականգնման ու ամրակայման աշխատանքների վերաբերյալ և այլն, որոնք հնարավորության կտան ընթերցողին ամբողջական պատկերացում կազմել այս ոլորտում երկրի անկախացումից ի վեր կատարված հիմնական գործերի մասին: Հոդվածները, գիտական խորհրդի որոշմամբ, հրատարակվում են հայերեն, անգլերեն և ռուսերեն՝ ելնելով այն հանգամանքից, թե ինչ լեզվով է հոդվածի բնագիրը: Սակայն բոլոր հոդվածներն էլ ունեն համառոտ ամփոփումներ՝ հայերենը և ռուսերենը՝ անգլերեն, անգլերեն հոդվածները՝ հայերեն: Այս մոտեցումը պայմանավորված է հայկական հուշարձանների ուսումնա-

սիրման, վերականգնման և պահպանության խնդիրները առավելագույնս միջազգայնացնելու նկատառումով:

Հուշարձանների վերականգնման բնագավառում հիմնականում արտացոլվելու են ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարության (նախկինում՝ ՀՀ պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության վարչության), Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի և Պատմական հուշարձանների պահպանման հայկական ընկերության կատարած աշխատանքները: Նկատի ունենալով անցած տարիների վերականգնման և ամրակայման գործերի զգալի ծավալները, որոնք հնարավոր չէ ընդգրկել մեկ հոդվածի սահմանում, որոշվեց պարբերաբար անդրադառնալ այս խնդրին և առաջինը՝ ներկա տարեգրքում ներկայացնել Պատմական հուշարձանների պահպանման հայկական ընկերության կատարածը: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Յուլի Թամանյանի «Քարե տարեգրության վերականգնումը» գրքում արդեն լուսաբանվել են մինչև 1978 թ. Հայաստանի Հանրապետությունում իրականացված հուշարձանների վերականգնման աշխատանքները, այստեղ ներկայացվում է 1979 թ. մինչ մեր օրերը կատարվածը՝ պատկերելով հուշարձանի տեսքը վերկանգնումից առաջ և հետո, և համառոտ տեքստ՝ հայերեն և անգլերեն, նշելով հուշարձանի տեղը՝ մարզը, ենթաշրջանը, բնակավայրը, անունը, տիպը, ժամանակը, վերակառուցման տարեթիվը, նախագծի հեղինակը, վերականգնող շինարարը և դրամական ներդրում կատարողը կամ բարերարը:

Առանձին հոդվածով ներկայացվում է նաև Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում կատարված հնագիտական պեղումների ցանկը, որտեղ նշվում են հուշարձանի անվանումը, տիպը, ժամանակը, տեղը՝ մարզը, ենթաշրջանը, բնակավայրը, պեղող հնագետը, պեղումների կատարման թվականը: Նկատի ունենալով վերականգնված հուշարձանների ու պեղումների մասին տեղեկատվության մասսայականացման կարևորությունը, այս երկու ամփոփիչ հոդվածների ցանկերը ներկայացնում ենք հայերեն և անգլերեն:

Հուսով ենք, որ «Հուշարձան» տարեգրքի վերահրատարակումը, որն իր մեջ ներառում է հայագիտական հանդեսների լավագույն ավանդույթները, ջերմորեն կընդունվի գիտական շրջանակներում և կլրացնի հուշարձանների ուսումնասիրման, վերականգնման ու պահպանության մասին ամփոփ տեղեկատվություն ստանալու հասարակության պահանջը: Տարեգրքի լույս ընծայումը կնպաստի Հայաստանի Հանրապետության և արտերկրի հայկական հուշարձանների պահպանությանը և վերականգնմանը, գնահատմանն ու վերարժևորմանը, ինչպես նաև՝ Հայաստնում զբոսաշրջության զարգացմանը:

Խմբագրական խորհուրդ

«Մեր աշխարհը, որ մի լիքը թանգարան է ամեն տեսակի կենցաղագիտական, պատմական, կրոնական, բանահյուսական և այլ մեծարժեք նյութերի, տակավին մնում են խավարի մեջ, իրենց փառքերը ավերակների և հողի տակ, իրենց արժանիքները մոռացության ու անհայտության մեջ»։

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

ԱՐՏԱԿ ՂՈՒԼՅԱՆ

ԱՆԻԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՀԱՄԱՐՄԱՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

(1001-2001թթ.)

Հայկական եկեղեցաշինության պատմության մեջ առանձնանում են այն բացառիկ կոթողները, որոնք, իրենց աննախօրինակ ստեղծագործական թռիչքով՝ չտեղավորվելով դարաշրջանի ճարտարապետության համատեքստում, դարձել են հայոց հնօրյա մշակույթի խորհրդանիշներ, ճարտարվեստի առեղծվածային մեծագործությունների առհավատչյան: Հայկական ճարտարապետության՝ համընդհանուր ճանաչմամբ, այդպիսի կոթողներից է Անիի Սբ. Աստվածածին Մեծ Կաթողիկե եկեղեցին՝ հռչակավոր Մայր տաճարը:

Կառուցման ժամանակից ի վեր դառնալով Բագրատունիների հայոց թագավորության մեծանուն մայրաքաղաքի ճարտարապե-




Նկ.1. Հուշարձանի տեսքը հյուսիս-արևմուտքից (վերակազմությունը Ա. Ղուլյանի)

տական պարծանքն ու խորհրդանիշը, Անիի Մայր տաճարը մշտապես գտնվել է թե՛ ժամանակակիցների, թե՛ հետագա դարերի հայ ու օտար տարեգիրների, ճանապարհորդների, պատմաբանների, հնագետների, ճարտարապետների, արվեստաբանների, հոգևոր դասի երևելիների ուշադրության կենտրոնում: Ստեղծված պատկառելի անիագիտական գրականության շնորհիվ պարզված են հուշարձանի պատմության և ճարտարապետության հետ կապված այլևայլ հարցեր, արժեքավորված է նրա առանցքային դերը հայկական միջնադարյան ճարտարապետության տարեգրությունում և մնայուն տեղը՝ համաքրիստոնեական եկեղեցաշինության լավագույն կոթողների ընտրանում*:

Առանձնակի քննության ու բանավեճի առարկա են դարձել տաճարի շինարարական արձանագրության թվականները և արտաքին հարդարանքի նախնականությունը, հորինվածքակազմության ուղիները, նրա տեղը Տրդատ ճարտարապետի ստեղծագործության մեջ, Հայաստանում և նրանից դուրս ունեցած ոճական ազդեցությունը և այլ հարցեր: Ցայսօր էլ շարունակվող բանավեճերի պատճառը մասամբ այն է, որ հուշարձանը տեղում ուսումնասիրողները՝ Ն. Մառը, Թ. Թորամանյանը, Հ. Օրբելին, նրա մասին որևէ հանգամանալից և ընդհանրական աշխատություն չեն թողել, իսկ տարբեր առիթներով Մայր տաճարին և մյուս հուշարձաններին տված գնահատականներում անհետևողական են գտնվել, հաճախ՝ իրարամերժ: Ավելին, որակով և ամբողջովին չեն հրատարակել Մայր տաճարի և Անի-Շիրակի մյուս հուշարձանների մեծարժեք չափագրություններն ու լուսանկարները, մենագրությամբ չեն ընդհանրացրել առկա ստվարածավալ նյութերն ու ուսումնասիրությունները: Ի վերջո՝ հուշարձանն այսօր անմատչելի է հայ մասնագետների համար:

Օրախնդիր է փորձել հազար տարվա հեռվից վերստին տեսնել Մայր տաճարը՝ դարաշրջանի պատմաքաղաքական ու հոգևոր կյանքի վերելքներով պայմանավորված բուռն եկեղեցաշինության ավելի քան հարյուրամյա ընթացքի մեջ և, հատկապես, դրանում կիրառված հորինվածքածների և արտահայտչամիջոցների համատեքստում:

Անիի Մեծ Կաթողիկեի կառուցումն առաջին հերթին պայմանավորված էր քաղաքական բարենպաստ իրավիճակով: Դեռևս Աշոտ Գ Ողորմած թագավորի (953-977 թթ.) օրոք՝ 961 թ., Անին վերջնականապես դարձավ մայրաքաղաք և սկսվեց թագավորության բարեկործումների շրջանը: Այն վերելք է ապրում հոր գահակից ու հաջորդ Սմբատ Բ Տիեզերակալի (977-990 թթ.), ապա վերջինիս եղբոր՝ Գագիկ Ա Շահնշահի օրոք (990-1020 թթ.): Թագավորության հզորացումն ուղեկցվում է մայրաքաղաքի ամրացմամբ ու բարեշինությամբ, նորանոր եկեղեցիների կառուցմամբ: Մյուս կողմից, Բագրատունիների և Պահլավունիների ծավալած աննախադեպ եկեղեցաշինությունն Անի-Շիրակում և նրանից դուրս, ըստ Ղ. Ալիշանի բնորոշման, պայմանավորված էր *«Քրիստոսի հազարամեայ յոբելեանի»* նշանավորման, և այդ առթիվ աստվածահաճո ձեռնարկումներով ու բարեպաշտությամբ ներկայանալու անսքող մտադրությամբ, ինչն, ի դեպ, բազմիցս շեշտվում է եկեղեցիների կառուցման մասին պահպանված ձեռագիր և վիմագիր աղբյուրներում: Մայր տաճարի կառուցումը մեծապես պայմանավորված էր նաև Սմբատաշեն պարիսպներով ընդարձակված մայրաքաղաքում



Նկ. 2. Մայր տաճարը, Սբ. Փրկիչը և Սբ. Հռիփսիմյանց մատուռը (վերակազմությունը Ա. Դուլյանի)

տարողունակ եկեղեցի ունենալու և Անին՝ Վաղարշապատի ու Դվինի օրինակով, նաև կաթողիկոսանիստ դարձնելու ցանկությամբ: Դրա իրագործմանն էին ուղղված վաղարշապատյան նշանավոր սրբավայրերի ճարտարապետության նորովի մեկնաբանություններն Անիում՝ զվարթնոցակերպ Սբ. Գրիգորը, հնգագմբեթ Սբ. Առաքելոցը, Սբ. Հռիփսիմյաց վկայարան-մատուռը: Երեքն էլ կառուցվել են 992 թ. կաթողիկոսարանն Արգինայից Անի տեղափոխելուց անմիջապես կամ մի փոքր հետո:

Իսկ երբ՞ է հիմնադրվել Մայր տաճարը: Ականատես-ժամանակակից Ասողիկի հայտնի տեղեկության համաձայն, ընդհանրացել և լայնորեն շրջանառվում է այն տեսակետը, որ տաճարը հիմնադրվել և շինարարությունն անմիջապես ընդհատվել է Սմբատ Բ-ի գահակալության վերջին տարում՝ 989 թ.: Ասողիկի պատմության ԺԱ գլուխը վերնագրված է. ***«Վասն թագաւորելոյն Սմբատայ ... և շինելոյ զպարիսպն Անւոյ հանդերձ եկեղեցեաւն...»*** *(Ասողիկ, 1885, էջ 187)*, իսկ Կ. Գանձակեցու վկայությամբ՝ ***«Սա*** /Սմբատը/ ***հիմնարկեաց և զկաթողիկէն ... և ոչ կարաց աւարտել, զի եհաս նմա վախճան մահու...»***, ապա՝ ***«Եւ ... Կատրամիտէ թագուհի աւարտեաց զկաթողիկէն սուրբ, զոր ոչ կարաց կատարել Սմբատ թագաւորն»*** *(Կիրակոս Գանձակեցի, 1961, էջ 88-89)*:

Ընդսմին, և՛ Ասողիկի հաջորդ վկայությունը *(Ասողիկ, 1885, էջ 256)*, և՛ տաճարի շինարարական արձանագրությունը (*ԴՀՎ, պրակ 1, 1966, էջ 35*) շեշտում են Կատրամիդեի հոգածությամբ Կաթողիկեի կառուցումն 1001 թ. ավարտելու և շռայլ նվիրատվություններով բարեզարդելու մասին: Վկայաբերելով այս տեղեկությունները՝ Տ. Մարությանն իրավացիորեն եզրակացնում է, որ Անիի Կաթողիկեի շինարարությունը Տրդատն սկսել է ավելի վաղ՝ մոտ 985 թ., մինչ այդ՝ 972-985 թթ., կառուցելով Արգինայի Կաթողիկեն (Т. Мартиян, 1989, с. 250-251)։ Բացի այդ, Մ. Ուռհայեցու «Ժամանակագրությունից» հայտնի է, որ Սմբատ արքան տաճարի համար հնդկաստանից բերել էր տվել շքեղ ու թանկարժեք բյուրեղյա ջահ, որը 1064 թ., երբ քաղաքը գրավեցին սելջուկ-թուրքերը, վայր է գցվել ու փշրվել (Մատթեոս Ուռհայեցի, 1991, էջ 162): Հնարավո՞ր է ենթադրել, որ թագավորը կծեռնարկեր այդպիսի քայլ, եթե հասցրել էր դնել ապագա տաճարի սոսկ հիմքերը: Ավելին, եկեղեցու հյուսիսային պատի արևելյան եզրասյուների միջև պահպանվել է Սմբատի անվան հիշատակությամբ արձանագրության մնացորդը, որի շարունակությունն, ըստ Հ. Օրբելու, եղել է չարամտորեն տեղահանված քարի վրա /լուսանկարներում քարի տեղն այժմ էլ երևում է հստակորեն/ (ԴՀՎ, պրակ 1, էջ 36):

Նկատի ունենալով նաև Սմբատ Տիեզերակալի ձեռնարկած շինարարության լայն թափը, մնում է կարծել, որ հարյուրավոր մետրեր ձգվող կրկնաշար պարիսպներ կառուցող թագավորն, իրոք, ի զորու էր և հասցրել է պարիսպների ու բուրգերի հետ միաժամանակ՝ հինգ տարում (985-989 թթ.), մոտ հարյուր մետր պարագծով եկեղեցին կանգնեցնել պարիսպներին հավասար՝ մոտ 10-11 մետր բարձրությամբ՝ մինչև ճակատների կամարաշարի վերին նիշը, կամ դրանից մի փոքր վեր՝ մինչև հորիզոնական քիվերը:

Անկախ դրանից, տաճարի շինարարության ընդհատումն, ըստ ամենայնի, պայմանավորված էր ոչ այնքան Սմբատ Բ-ի մահով, որքան՝ նույն կամ հաջորդ տարում (990 թ.) Տրդատի Կոստանդնուպո-

լիս մեկնելով: Այլապես՝ ճարտարապետական ձեռնարկումներով ոչ պակաս հայտնի նոր թագավորն ու թագուհին կարող էին շարունակել Կաթողիկեի կառուցումը և իրագործել Գագիկ արքայի վաղեմի բաղձանքը՝ զվարթնոցակերպ Սբ. Գրիգորի հիմնարկեքը: Սակայն վկայված է, որ շինարարությունն, այնուամենայնիվ, ընդհատվել է և միայն Տրդատի վերադարձից հետո (մոտ 992 թ.) Կատրամիդե թագուհին վերսկսել է Մայր եկեղեցու կառուցումը՝ գմբեթավորումը, իսկ Գագիկ Ա-ն՝ հիմնադրել Սբ. Գրիգորը:

Տաճարի կառուցումն ավարտվել է 1001 թ.: Այս մասին վկայված է շինարարական արձանագրության առաջին երեք համաժամանակյա թվարկումներում: Պատմիչներ Ասողիկը, Կ. Գանձակեցին և Ս. Անեցին միաբերան շեշտում են, որ և՛ Մայր տաճարի, և՛ Գագկաշեն Սբ. Գրիգոր եկեղեցու շինարարությունը ***«կատարեցաւ ի հազար ամի մարմնանալոյ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»***, այսինքն՝ նույն 1001 թ. (*Ասողիկ; Կ. Գանձակեցի; Սամուել Անեցի; 1893, էջ 104-105*):

1004 թ. իր պատմությունն ավարտած Ասողիկը հիացմունքով է նկարագրում ***«սքանչելատես տեսլեամբ գմբեթաւորեալ»*** և ***«չոյսանցոյց պատուհանօք»*** /բոլորածև պատուհաններով/ Գագկաշեն եկեղեցին, ուստի անհիմն է վերջինիս թվագրումը Մայր տաճարի ավարտի և Գագիկի թագավորության վերջին տարվա միջակայքով /1001-1020 թթ./ *(И. А. Орбели, 1963, с. 121, Վ. Հարությունյան, 1992, էջ 233): Լայն տարածված այս թվագրումը վիճարկում է նաև Ստ. Մնացականյանը, հարցը թողնելով առկախ (Ստ. Մնացականյան, 1971, էջ 202-203; նույնի՝ 1982, էջ 130)*: Ն. Մառն ու Թ. Թորամանյանը ևս Գագկաշենի կառուցման ավարտի տարին 1001 թ. են համարում: Թ. Թորամանյանը նույնիսկ համոզված է, որ դրանից 10-12 տարի անց է ամրացվել վթարված տաճարը, և դա հիմնավորել է 1013 թ. վիմագրով *(Թ. Թորամանյան, 1942, էջ 266, 275, նույնի՝ 1984, էջ 94; Н. Я. Марр, 1939; նույնի՝ 1907):*

Պատմական աղբյուրներում վկայված չէ Կատրամիդեի ծախսով Մայր տաճարի շինարարությունը և դրան Տրդատի մասնակցության փաստը: Այդ առումով, կարծում ենք, մեծ հետաքրքրություն է ներկայացնում մինչև այժմ պահպանված շինարարական անեղծ վկայագիրը՝ փորագրված եկեղեցու հարավային ճակատի արևմտյան որմնակամարի տակ**: Բազմաթիվ վերծանությունների հեղինակները համոզված են, որ արձանագրության վերջում հիշատակված «Բենէ»-ն փորագրողի անունն է և տարակուսում են, թե ինչու թագավորական ու կաթողիկոսական անունների կողքին այդքան կարևորված է գրչի անունը: Իրադրությունը միանգամայն փոխվում է, երբ այդ բառը փորձում ենք դիտարկել ոչ թե որպես անձնանուն, այլ՝ մասնագիտական կոչում: Հայտնի է, որ միջնադարում Առաջավոր Ասիայի մի շարք երկրներում ճարտարապետները, ի շարս այլ ձևերի, հաճախ կոչվել են նաև «բեննա» /«նալբենա»/, որն արաբերեն ճարտարապետ կամ վարպետ է նշանակում: Մահմեդական Արևելքի ճարտարապետության հմուտ գիտակ Լ. Բրետանիցկին նշում է, որ սովորաբար «բեննա» են կոչել աչքի ընկնող և համբավավոր ճարտարապետներին, այլ խոսքով՝ վարպետաց վարպետ /օրինակ է բերում Աբուբեքրի որդի Ամեմի Նախիջևանցուն, որն անփոփոխ այդպես է կոչվել ու ստորագրել իր գործերը/ *(Л. С. Бретаницкий, 1966, с. 439-445, 523-524, նույնի՝ 1988,*

c. 166): Իսկ այն, որ հայոց արքունի ճարտարապետը կարող էր կոչվել արաբական միջավայրում հայտնի պատվանունով, կարծում ենք, բացատրության կամ հիմնավորման կարիք չունի: Հիշենք նույն վիմագրում փակագիր հիջրայի թվականի գործածությունը, Բագրատունիների «շահնշահ» տիտղոսը, Գագիկ Ա-ի արաբազգեստ արձանը և այլն: Ի դեպ, արդի ադրբեջաներենում արաբերենից փոխառված «բեննա»-ն դարձյալ նշանակում է քարգործ, որմնադիր: Նույն իմաստով օգտագործվում է նաև Ղարաբաղի բարբառում:

Այսպիսով՝ չափազանց հավանական է ենթադրել, որ տաճարի շինարարական արձանագրության փորագրող-հեղինակը Տրդատ ճարտարապետն է և հենց նրան է իրավունք վերապահվել ոչ առանց հպարտության ընդգծելու. ***«Գրեցաւ յիշատակարանս ի ձեռն իմ բենէ»***, ասել է թե՝ տաճարի ճարտարապետի ձեռքով, քանզի ճանաչված վարպետն այդ օրերում մեկն էր՝ Տրդատը:

Դրանով վերջնականապես հերքվում է տաճարի արտաքին հարդարանքը 12-13-րդ դդ. վերակառուցման արդյունք համարելու մասին հայտնի տեսակետը, ինչը չնայած բազմիցս հերքել են Ն. Տոկարսկին, Վ. Հարությունյանը, Ստ. Մնացականյանը, Տ. Մարությանը և այլոք, այնուամենայնիվ, այսօր էլ հետևորդներ ունի *(Կ. Մաթևոսյան, 1997, էջ 338-339)*:

Անիի Մայր տաճարը դարաշրջանի եկեղեցիներից առանձնանում է իր բացարձակ չափերով /21.9 X 34.3 մ/ և ամբողջությամբ՝ մոտ 38 մ բարձրություն ունեցող գմբեթով կանգուն է մնացել ավելի քան 900 տարի: 19-րդ դ. կեսերին երկրաշարժից փլված գմբեթի քանդակազարդ բեկորները հավաքվել և պահպանվում էին հյուսիսային շքամուտքի մոտ *(Հ. Ջ. Մարր, 1913, c. 29)*, իսկ ավելի վաղ քանդվել էին երեք շքամուտքերը: Հավանաբար այդ փլուզման հետևանքով ճեղքվել է տաճարի հյուսիս-արևմտյան անկյունապատը: Հետագայում ճեղքն ընդարձակվել է հյուսիսային ճակատի եզրային որմնակամարների չափով՝ սպառնալով կործանել հուշարձանը: Այժմ մոտ 21 մ բարձրությամբ՝ մինչև գմբեթատակի գոտին, կանգուն տաճարն աստիճանաբար քայքայվում և խարխլվում է:

Տաճարը հորինվածքով քառամույթ գմբեթավոր բազիլիկ է: Չորս հզոր փնջաձև մույթերի կամարակապի վրա բարձրացել է ներքուստ բոլորաձև, իսկ արտաքուստ 24 նիստավոր թմբկապատը՝ հարդարված որմնակամարաշարով, որի գրեթե բոլոր որմնասյուների խարիսխներն ու պատուհանների հետքերը դեռևս պահպանվում են: Ըստ պահպանված լուսանկարների՝ թմբուկի զույգ որմնասյուներն իրենց տրամատով ու քանդակազարդ խոյակներով եկեղեցու խորանի որմնակամարաշարի սյուների կրկնօրինակներն են, իսկ դրանք կապող զարդակամարներն ունեցել են բոլորակներից կազմված քանդակահյուսք: Կամարներից վեր թմբկապատը վերածվել է գլանի և հարդարվել երկու մաքուր քարաշարքի միջև ձգվող հորիզոնական ոլորազարդերի մեջ առնված ծաղկաթերթ բոլորակաշարով: Գմբեթը պսակվել է կոնաձև վեղարով, որի մանրամասները, բեկորների բացակայության պատճառով, հայտնի չեն:

Ավելորդ համարելով տաճարի կանգուն մասի հատակագծային հանրահայտ հորինվածքի ու ճարտարապետական հարդարանքի նկարագրությունը, համառոտաբար ներկայացնենք դրանց որոշ՝ առանձնահատկություններ՝ դարաշրջանի ճարտար-

վեստի զինանոցից զուգահեռելով այլ օրինակներ:


Ավանդաբար Անիի Մայր տաճարի հատակագծային տիպի նախօրինակներ են համարվում վաղ միջնադարյան քառամույթ գմբեթավոր բազիլիկները (Գայանե, Օձուն, Մրեն): Սրանց հատակագծային նմանությունը, իհարկե, նկատելի է, սակայն մանրամասների մեջ՝ անճանաչելիորեն աղոտ, իսկ մեկնաբանությամբ՝ միանգամայն այլ են:

Ճարտարապետական ստեղծագործությունում հատակագծային կամ ծավալային լուծումները թեև կարևոր են, այնուամենայնիվ՝ ոչ վճռորոշ: Նման կարգի հանգուցային կառույցներում ամենակարևոր գործոնը ճարտարապետական կերպարն է՝ եզրապատկերի կեցվածքով, ընդհանուրի ու մասնավորի հարաբերությունն ընդգծող ծավալայնությամբ, կառուցվածքաձևերի ու դրվագավորման-զարդավորման միջոցների արտահայտչական լիցքով, գեղարվեստական հնչեղության ու ոճական ուղղվածության միտումներով: Այս ելակետից միանգամայն պարզ է, որ Մայր տաճարի ճարտարապետական դիմագծի հնչերանգներին նախորդում են ինչպես Տրդատաշեն Արգինայի, այնպես էլ կառուցման ժամանակով ու տեղադրությամբ առավել մոտ Օղուզլուի և Շիրակավանի, այնպես էլ ավելի վաղ շրջանի Արուճի և Թալինի եկեղեցիները: Հորինվածքակազմության այս ուղղվածությամբ պետք է բացատրել տաճարի ճակատների եռանկյուն խորշերի, վերին մասերում բոլորաձև պատուհանների, զարդակամարաշար գմբեթների և վերջիններս հենամույթերի՝ կամարակապից ետ դնելու ակնհայտ ընդհանրությունը, որը նկատելի է հիշյալ եկեղեցիներում:

Հատկանշական է նաև, որ զարդակամարաշարով գմբեթի տիպը նախասիրված էր Բագրատունյաց թագավորական տան բոլոր ճյուղերի տիրույթներում՝ Շիրակում, Վանանդում, Լոռիում և Տայքում, 9-11-րդ դդ. կառուցված եկեղեցական խոշոր շենքերում, և կասկած չի թողնում, որ սյունազարդ են եղել նաև Արգինայի Կաթողիկեի և դրան խիստ հարազատ ու Տրդատին վերագրվող Հաղբատի Սբ. Նշան եկեղեցու հետագայում վերակառուցված գմբեթները: Ըստ Հ. Խալփաղչյանի համոզիչ վերակազմության Սանահինի Սբ. Ամենափրկիչ եկեղեցու նախնական՝ կամարազարդ գմբեթն ու ճակատները նույնպես այս ընդհանուր ուղղվածության արդյունքն են: Համանման հարդարում է ունեցել նաև Աշոտ Ողորմածի կնոջ՝ Խոսրովանույշ թագուհու նախաձեռնությամբ կառուցված Հաղբատի Սբ. Նշան եկեղեցին:

Ընդհանուր ճարտարապետական կերպարի հանդիսավորությամբ ու գեղազարդ գմբեթով շեշտված այս գմբեթասրահների հատակագծային խմորումների և վերածնավորման ընթացքը, ինչպես նկատում է Ստ. Մնացականյանը, արդեն ցուցաբերում է գմբեթակիր մայր մույթերը երկայնական պատերից անջատելու նախանշանները *(Ստ. Մնացականյան, 1992 թ., էջ 120-123)*: Տրդատ ճարտարապետը, ելնելով Մայր տաճարի հատակագծային խոշոր չափերից և խուսափելով չափազանց մեծաթռիչք գմբեթից, տրամաբանական ավարտին է հասցրել Արգինայում և Հաղբատում գմբեթակիր մույթերի շեշտադրման այդ միտումը՝ դրանք փոքր-ինչ անջատելով պատերից: Միայն այս ճանապարհով է հնարավոր դարձել տաճարի ընդհանուր ուրվանկարի և ներքին կառուցվածքաձևերի աննախօրինակ թեթևությունն ու սլացքը, որոնք դուրս են նույնիսկ դարաշրջանի ճարտարապետությանը բնորոշ վերասլացության սկզբունքներից:

Այս առանձնահատկությունը ցայտուն



Նկ. 3. Անիի Մայր տաճարը երեկոյան (վերակազմությունը Ա. Դուլյանի)



Նկ. 4. Տաճարը հարավ - արևելքից (վերակազմությունը Ա. Դուլյանի)

դրսևորվել է հատկապես հարևան Տայքի կառույցներում: Օշկ վանքի տաճարի գմբեթն իր համաչափություններով ու 24 նիստավոր թմբուկով, ինչպես նաև երկու մույթերով դուրս շեշտված շքամուտքով Մայր տաճարի ժամանակակիցն ու մերձավորներից է *(Տ. Մարության, 1978, էջ 104-108)*:

Անիի Կաթողիկեի ճարտարապետական հարդարանքի յուրօրինակ կողմը ճակատների կամարազարդումն է՝ մեկական նրբատաշ որմնասյուների խաղացկուն ռիթմով և եկեղեցու խաչաթևերն ընդգծող լայնաղեղ կամարներով շրջանակված թանձրամույթ շքամուտքերի առանցքային շեշտադրմամբ: Ճարտարապետն այստեղ գեղարվեստական ազդու արտահայտչականության է հասել՝ տաճարի ընդհանուր ծավալների կոթողայնության, որմնախորշերում ու շքամուտքերում խտացված լուսաստվերի և հարդարանքի մանրադրվագ անկրկնելի նրբագեղության ու դրանց նույնքան անսպասելի հակադրությամբ *(Գ. Շախկյան, 2001, էջ 27-38, նույնի՝ 2003, էջ 15-22)*: Համեմատական դիտարկումները ցույց են տալիս, որ կամարազարդ ճակատների և հատկապես մեկական սյուներով որմնակամարաշարի հնարքը ևս նախապատրաստված էր Մայր տաճարին նախորդած այլ եկեղեցիներում: Արգինայում նկատելի են պատուհանների եզրերը սյունազարդելու և կամարակապելու առաջին փորձերը: Հնարք, որը փոքր-ինչ հետո դառնում է Աբուղամրենց Սբ. Գրիգոր եկեղեցու ճակատների հիմնական զարդամիջոցը՝ զուգորդված որմնաեզուստների խորշերը եզերող մեկական սյուների և դրանց կամարների հետ, որոնք ապա տեղ են գտնում Մայր տաճարի պատուհանների արտաքին ու ներքին հարդարանքում: Նույնը դիտվում է շքամուտքերի ձևավորման մեջ: Արգինայում և Աբուղամրենց եկեղեցում դրանք գրեթե նույնական են, իսկ Մայր տաճարում՝ հարստացված բազմախորք փնջավորմամբ ու անջատ մույթերով:

Վերջապես, Մայր տաճարում Տրդատի մեծագործությունը նորարարություն է՝ շենքի բոլոր ճակատներն ու գմբեթը նրբորեն հարդարելու միջոցով հայ եկեղեցաշինության մեջ քաղաքային ոճի սկզբնավորումը: Սակայն եկեղեցաշինության քաղաքային, իսկ հաջորդ դարերում՝ «գեղատեսիլ» կոչված ոճական ուղղության առաջնեկն, այնուամենայնիվ, Մայր տաճարը չէր: Անիի Մեծ Կաթողիկեի ծնունդը պայմանավորված էր քաղաքի Փոքր Կաթողիկեի գոյությամբ: 1912 թ. պեղումներով միջնաբերդի և Աշոտաշեն պարիսպների միջև հայտնաբերված այս եկեղեցին Ն. Մառը պայմանականորեն անվանում է «Հին քաղաքի Մեծ տաճար» և, ըստ բազմաթիվ ճարտարապետական բեկորների ու քանդակազարդերի՝ թվագրում 10-րդ դ. կեսով *(Н. Я. Марр, с. 180-186; նույնի՝ с. 14-29)*: Այժմ այս եկեղեցին գրականության մեջ սակավ է կոչվում «Աշոտի քաղաքի եկեղեցի կամ Քարիմադինի եկեղեցի» և, առանց հիմնավորման, թվագրվում է 13-րդ դ. *(G. Uluhogian,1992; Paolo Cuneo, 1988)*:

Փոքրաչափ գմբեթասրահի (9.5–14.0 մ, չափ. Պ. Կնյագնիցկի) յուրօրինակ հորինվածքով եկեղեցու ճակատները և գմբեթը հարդարված են եղել երկսյուն զարդակամարաշարով, որոնք, հատկապես գմբեթի սյունաձևերն ու զարդագոտին, ըստ Ն. Մառի բնորոշման, ***«ապշեցուցիչ նմանություն ունեն Մայր տաճարի գմբեթի բեկորների հետ»***: Եկեղեցու ներքին որմեզրերի մշակումը՝ վերասլաց տրամատավորմամբ, փնջաձև որմնասյուներով շեշտված

միակ՝ հարավային շքամուտքը, ճակատային որմնակամարաղեղների հանգույցի ընդգծումը եռանկյունաձև փորվածքով և այլ մանրամասեր իրենց զուգահեռն ունեն միայն Մայր տաճարում և հնարավոր են դարձնում ենթադրել, որ հենց սա է Ասողիկ պատմիչի հիշատակած Աբասաշեն *«Փոքր Կաթողիկէ Անւոյ» (Ասողիկ, 1885 թ., էջ 172)*, որտեղ, ըստ ամենայնի, 961 թ. թագադրվել է Աշոտ Գ Ողորմած թագավորը: Եկեղեցին Անիի Փոքր Կաթողիկեն համարելու առաջին ենթադրությունը կատարել է Կ. Մաթևոսյանը *(Կ. Մաթևոսյան, 1997 թ., էջ 155-158)*, ինչը, կարծում ենք, հաստատվում է նաև ճարտարապետական դիտարկմամբ: Հիշարժան է, որ Մայր տաճարի և իր իսկ պեղած եկեղեցու ճարտարապետական հարազատությունը նկատի առնելով, Ն. Մառը դրանից հետո չի վերանայել կամ, որ ավելի հավանական է, առիթ չի ունեցել վերանայելու Մայր տաճարի հարդարանքի նախնականության հարցում ունեցած մոլորությունը:

Ամեն պարագայում ակնհայտ է, և բազմիցս նշվել է, որ 10-րդ դարի երկրորդ կեսը նշանավորվել է ոճական նոր ուղղության սկզբնավորմամբ, որի կայացման գործում վճռորոշ ավանդ է ունեցել ճարտարապետ Տրդատը և որը հատկապես արտահայտվել է նրա ամենաերևելի ստեղծագործությունում՝ Անիի Մեծ Կաթողիկեում: Հատկանշական է, որ Արգինայի և Հաղբատի կաթողիկեների վանական զուսպ կոթողայնությունը նույն և հաջորդ՝ 11-րդ դարում, հանդես է գալիս առավել համեստ չափերով ու անպաճույճ դիմագծով (Հոռոմոս, Բագնայր, Հայկաձոր և այլն), իսկ Մայր տաճարի ակնհայտ քաղաքային նրբագեղությունն ու պերճանքը ոչ միայն անմիջապես ընդգծվում են Անիի և մերձակայքի բարձրարվեստ կառույցների՝ Գագկաշեն Սբ. Գրիգոր, Սբ. Առաքելոց, Սբ. Փրկիչ, Մարմաշենի Կաթողիկե, Խծկոնքի Սբ. Սարգիս տաճարների ներկայությամբ, այլև հաջորդ՝ 12-14-րդ դդ., համեմատաբար փոքր չափերի մեջ արձագանքվող հեռու ու մոտ իշխանական հոգևոր կենտրոն-«մայրաքաղաքներում», դարձյալ բուն մայրաքաղաքում ունենալով անզուգական օրինակներ (Հոնենցի Սբ. Գրիգոր Լուսավորիչ, Զաքարեի Սբ. Հովհաննես):

Մայր տաճարի ճարտարապետական հարդարանքի մանրամասերի համեմատական դիտարկումը մայրաքաղաքում և մերձակայքում 11-րդ դ. առաջին տասնամյակում կառուցված նշանավոր եկեղեցիների հետ ցույց է տալիս, որ այն (ի դեպ՝ նաև Փոքր Կաթողիկեն) զերծ է Գագկաշենի, Սբ. Առաքելոցի, Սբ. Փրկչի, Մարմաշենի, Խծկոնքի, Միջնաբերդի և այլ եկեղեցիների հարդարանքում նկատված հունաբանության ազդեցությունից (Տ. Իզմայլովա, Վ. Հարությունյան, Ն. Տոկարսկի, Ստ. Մնացականյան) և այստեղ, բացառությամբ մի խորշի զարդապսակի, դժվար է գտնել անտիկ ճարտարապետական զարդարվեստի զինանոցին պատկանող որևէ դրվագ:

Ճարտարապետական հունաբան դպրոցին հարող որոշ զարդամիջոցների ի հայտ գալը 10-րդ դ. վերջերին և իսպառ անհետացումը 11-րդի կեսերին, ոմանք զգուշությամբ փորձում են պայմանավորել Տրդատի պոլսյան ուղևորությամբ: Հավանաբար իրոք այդպես է, և դարձյալ պետք է կարծել, որ նրա վերադարձի ժամանակ Մայր տաճարն արդեն կառուցված էր առնվազն շքամուտքերի վերին մակարդակի չափով, քանզի դրանից անմիջապես կամ մի փոքր հետո կառուցվող Գագկաշենում և հիշյալ եկե-

ղեցիներում այդ նորամուծությունները տեղ են գտել հատկապես շքամուտքերում, որոնք ուղղանկյուն երեսակալների թույլ տրամատով ու զարդարուն վերնաքիվերով տրամագծորեն տարբերվում են Մայր տաճարի թանձր ու փարթամ շքամուտքերից: Ուշագրավ է, որ վերջիններս էլ որոշ տարբերակումներով նույն տարիներին արձագանք են գտել Կեչառիսի Սբ. Գրիգոր, Սբ. Նշան, Ամբերդի Վահրամաշեն եկեղեցիներում:

Դրա հետ մեկտեղ 10-11-րդ դդ. Անիական ճարտարապետական դպրոցի արտահայտչածևերի զինանոցում դիտվում են տրամատավորման և զարդավորման բազմաթիվ, այսպես կոչված՝ «թափառող» միջոցներ ու հնարքներ, որոնք գրեթե նույնությամբ կրկնվում են բազմաթիվ հուշարձաններում և մեծ մասամբ հայտնի են վաղ միջնադարյան նախօրինակներով: Այդպիսիք են քիվերի շեղադիր քառակուսիներից կազմված զարդահյուսվածքները, տարաբնույթ ատամնաշարերը, որմնախոյակների բարձիկի ու վերնասալի միջև հավելված մանրադրվագ բոլորակաշարերը, զույգ որմնասյուները անջատող եռանկյունածև ելուստները, սյունախարիսխների, խոյակների և որմնագոտիների տրամատավորման հարստացումը միջանկյալ ներճկվածքներով, խաղողի որթի գալարուն երկրաչափական տարբերակները, բոլորածև զարդապսակով պատուհանները, բազմաթերթ վարդակներից կազմված բոլորաշղթաները, պատուհանների շրջանակումը քանդակահյուս, ուղղանկյուն երեսակալներով կամ կամարավարտ զուգասյուներով, սյունախրձերով և այլն: Ընդհանուր հատկանիշ են զարդարվեստի փոքր-ինչ խստությունն ու երկրաչափական հարթապատկերայնությունը:

Միաժամանակ Մայր տաճարում ի հայտ են գալիս նորահնար մոտիվներ, որոնք հետագայում կա'մ լայն կիրառություն չեն գտել, կա'մ օգտագործվել են սակավադեպ: Մասնավորապես արտաքին խորշերի աստիճանավորումը տեսնում ենք Սբ. Առաքելոց, Միջնաբերդի քառախորան և Մարմաշենի երկու եկեղեցիներում: Ճակատներում խաչաթևերի ընդգծումը՝ թույլ արտահայտված լայն որմնաձելուստով, տեղ է գտել միայն Սբ. Առաքելոց տաճարում: Գմբեթաթմբուկը նույն՝ մոտ 10.5 մ ներքին տրամագծով և կամարաշար նիստերով, գրեթե կրկնվել է Սբ. Փրկչի տաճարում, իսկ ճակատային որմնախոյակների քանդակազարդումը, արծվակիր զույգ խորշերը և հարավային շքամուտքը դարաշրջանում այդպես էլ մնացել են եզակի:

Ինչ խոսք, եզակի է տաճարի հավաքական արտահայտչականությունը՝ թե' ներքին ոգեշունչ վերասլացության, թե' արտաքին ուրվապատկերի հաղթահասակ ու տիրական կեցվածքում՝ շքեղորեն հանդերձավորված նրբազգաց արվեստագետ-ճարտարապետի արարման ներշնչանքի սարսուռը պահած մանրադրվագներով:

Եվ արդյո՞ք նոր քննության կարոտ չէ Տրդատ ճարտարապետի ստեղծագործական կենսագրությունը, քանզի տարբեր հեղինակներ նրան են վերագրում նաև Սբ. Առաքելոց և Սբ. Փրկչի տաճարները, Աբուղամրենց Սբ. Գրիգոր և Հովվի եկեղեցիները, Հաղբատի Սբ. Նշանը, Մարմաշենի Կաթողիկեն, Անիի որոշ պալատական դահլիճներ, պարիսպներ, կամուրջներ, քաղաքաշինական ձեռնարկումներ*** : Մեկ ճարտարապետի ստեղծագործության մեջ այս ամենն, անշուշտ, անհնար է տեղավորել ոչ՝ միայն գործնականում դրանք իրագործելու առումով, այլև

հակասականության հասնող ճարտարապետական այն բազմազանության պատճառով, որն առկա է դրանց հորինվածքներում և հարդարանքում: Բացի այդ, առաջնորդվելով հուշարձանների մակերեսային նմանության սկզբունքով, ստացվում է, որ Տրդատին պետք է վերագրել նույն ժամանակաշրջանի գրեթե ողջ ճարտարապետական հունձքը Անի-Շիրակում (և ոչ միայն): Թվում է՝ խնդրի լուծումը պետք է գտնել Տրդատի ստեղծագործական դպրոցի և դրա առնվազն մի քանի տաղանդաշատ ներկայացուցիչների՝ առայժմ մեզ անհայտ, գոյությամբ: Հանգամանք, որ նշել են նաև այլոք՝ 10-րդ դ. հայտնի Սամեհան ճարտարապետը, 13-րդ դ. Անեցի Գազանը, Խաչենիկ Անեցին և ուրիշներ:

Հայ ճարտարապետության անհական դպրոցի այդ անանուն վարպետներն, ըստ ամենայնի, օժտված են եղել ստեղծագործական այնպիսի անհատականությամբ, որ դարաշրջանի սահմանափակ ու հաճախակի կրկնվող հորինվածքաձևերի և արտահայտչամիջոցների հնարամիտ զուգորդումներով ստեղծել են միմյանց այնքան նման, սակայն երբեք չկրկնվող կոթողներ՝ կերտելով Տրդատաշեն Մայր տաճարով պսակված Բագրատունյաց մայրաքաղաքի և նրա դուստր-վանքերի ճարտարապետական դեմքը:

Պետք է կարծել, որ Գագկաշենի կառուցման դառը փորձից անմիջապես հետո սկսվել է երկու ինքնատիպ տաճարի՝ Սբ. Առաքելոցի և Սբ. Փրկչի շինարարությունը, որոնցից առաջինն իր հուժկու քառախորանով, երկրորդը՝ կրկնահարկ բոլորաձևությամբ, իսկ երկուսն էլ՝ զարդակամարաշար հանդերձանքով ոչ միայն Գագկաշենի յուրօրինակ ճարտարապետական նմուշն են, այլև Մայր տաճարի հետ համահունչ ու ներդաշնակ եռյակ կազմելով, դարձել են խայտաբղետ քաղաքահյուսվածքի հորինվածքային հանգուցակետը՝ տիրականորեն իշխելով «հազար ու մեկ եկեղեցիների» հռչակավոր քաղաքի համայնապատկերում:

Անիի Մայր տաճարը ոչ միայն Տրդատ ճարտարապետի, այլև անհական ստեղծագործական դպրոցի անգերազանցելի նվաճումն է: Այստեղ ճարտարապետն իր առջև դրված խնդիրը լուծել է մեծագույն արվեստագետին հատուկ հմտությամբ. ստեղծել է նախորդ երևելիներին չկրկնող և հետագայում էլ դժվար ընդօրինակվող մի տաճար, որը պիտի լիներ հայոց հզոր պետականության, նրա օրըստօրե փարթամացող մայրաքաղաքի և ծաղկման լավագույն դարերից մեկն ապրող ճարտարապետության խորհրդանիշը:

Այսօր էլ այնքան մոտ ու այնքան հեռու քարափի լռության միջից իր հազարամյա արքայական հանդերձանքով շարունակում է հմայել հայոց տիեզերական թագավորի և բարեպաշտ թագուհու տաճարը՝ տաճարների տիեզերականն ու թագուհին...

---

1. Գ. Լևոնյան, Ճարտարապետ Տրդատ Անեցին և իր գործերը, «Էջմիածին», Զ տարի, հունվար- փետրվար,1949,

2. Գ. Շախկյան, Հայ ճարտարապետության յոթ հրաշալիքներ, Երևան, 2001:

3. Գ. Շախկյան, Անիի Մայր տաճարը... Կեռաւորաց փափագելի, «Անիի հազարամյա փառքը» ժողովածու, Երևան, 2003:

4. Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. Ա, Երևան, 1942:

5. Թ. Թորամանյան, Զվարթնոց- Գագկաշեն, Երևան, 1984:

6. Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Երևան, 1961:

7. Կ. Մաթևոսյան, Անի, Ս. Էջմիածին, 1997:

8. **Մատթեոս Ուռհայեցի**, ժամանակագրություն, Երևան, 1991:

9. **Սամուել Անեցի**, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893:

10. **Ս. Եվահիրճեան**, Տրդատ ճարտարապետ հայոց, «Անի» ամսագիր, Ե տարի, թիւ 6-7, յունիս- յուլիս, Պէյրութ, 1952:

11. **Ս. Եվահիրճեան**, «Հայ արհեստակցական եւ հայեցողական որմնադրութիւնը», հաւաքեց եւ խմբագրեց Բաբգէն վրդ. Թօփճեան, Պէյրութ, 1967:

12. **Ստեփանոսի** Տարօնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1885:

13. **Ստ. Մնացականյան**, Զվարթնոցը և նուիրատիպ հուշարձանները, Երևան, 1971:

14. **Ստ. Մնացականյան**, Վարպետաց վարպետներ, Երևան, 1982:

15. **Վ. Հարությունյան**, Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, 1992:

16. **Տ. Մարության**, Խորագույն Հայք, Երևան, 1978:

17. «Դիվան հայ վիմագրության», պրակ 1, Երևան, 1966:

18. **И. А. Орбели**, Избранные труды, Ереван, 1963:

19. **Л. С. Бретаницкий**, Зодчество Азербайджана и его место в архитектуре Переднего Востока, Москва, 1966.

20. **Л. С. Бретаницкий**, Художественное наследие Переднего Востока эпохи Феодализма, Москва, 1988.

21. **Н. Я. Марр**, Ани, Ереван, 1939.

22. **Н. Я. Марр**, О раскопках и работах в Ани летом 1906 г., Санкт-Петербург, 1907.

23. **Н. Я. Марр**, XI-я Анийская археологическая кампания, Санкт-Петербург, 1913.

24. **Т. Марутян**, Архитектурные памятники, Звартноц, Аван, Собор Анийской Богоматери, Ереван, 1989.

25. **G. Uluhogian**, Les e'glises d' Ani L' opres le temoignage desinscriptions, " Revue des etudes Armeniennes", vol. 23, Paris, 1992.

26. **Paolo Cuneo**, Architettura Armena, tomo I, Roma, 1988.

* Անիի մայր տաճարին նվիրված պատմական աղբյուրները և մասնագիտական գրականությունը հարուստ են և հսկայածավալ, ուստի այստեղ հղվում են միայն առաջադրված հարցերին անմիջական առնչություն ունեցող աշխատությունները:

** Արձանագրության վերծանությանը անդրադարձել են Ն. Մառը, Կ. Բասմաջյանը, Ն. Ակինյանը, Ա. Աբրահամյանը, Ա. Մանուչարյանը, Ս. Ավագյանը, Տ. Մարությանը, Ս. Սաղումյանը, Կ. Մաթևոսյանը:

*** Տրդատ ճարտարապետի գործունեությանը նվիրված Թ. Թորամանյանի, Վ. Հարությունյանի, Կ. Հովհաննիսյանի, Ստ. Մնացականյանի, Տ. Մարությանի և այլոց դիտարկումների և աշխատությունների շարքում ուշագրավ են Գ. Լևոնյանի և Ս. Եվահիրճյանի՝ սակավ շրջանառվող հոդվածները: Տես՝ Գ. Լևոնյան, 1949, էջ 55, Ս. Եվահիրճեան, 1952, էջ 345, վերահրատարակությունը՝ տես 1967, էջ 37-76, 77-99.

Artak Ghulyan

The 1000 year Mystery of the Cathedral in Ani

(Summary)

The history and the architecture of the Cathedral of "Mayr Astvatsatsin" in the capital of Armenia Ani (X-XIVcc) has long been the narrative of many authors, and still this unique and magnificent building needs a thorough and full study.

The article touches upon several arbitrary questions. The author particularly tries to demonstrate, that the Cathedral, in the main, was built in 985-989, before the death of king Smbat Bagratuni; later in 992-1001 continued by the architect Tiridad who returned from Constantinople and finished the work under the sponsorship of queen Catranitse by building the dome. In the same 1001 year the building of another remarkable temple Gagikashen of St. Grigor was finished.The two churches like the others of the same period in Armenia were devoted to the 1000 th anniversary of the Birth of Christ.

The word "Bené".... mentioned at the end of the inscription on the Cathedral in 1001 does not denote a person's name but a profession which is the Armenian version of the Arabic word "benna" meaning architect, stone-mason, and is the signature of architect Tiridad.

The general plan of the temple is not a new version of the Early Meadieval domed basilics (Odzun, Mren, Gayane), but the result of a new-developed trend in church building style, like in Aruch, Talin, Shirakavan, Ozuzlu, Arguina.

The direct prototype of the Greater Cathedral is the SmallerCathedral of Ani, built in the middle of the X c during the reign of Ashot Voghormats. The general plans and the peculiarities of these two churches shaped a new city architectural style. It is traced in variations in a number of churches of that period, such as churches in Ani, Gagikashen St. Grigor, St. Arakelots (Apostoles'), St. Prkitch (The Redeemer), Khitskoniq, St. Sarguis, Marmashen, Vahramaberd and so on. Later in smaller dimentions it was widely used in XII-XIVcc in princely capital-temples.

The Cathedral in Ani together with other churches (Gagikashen St. Grigor, St. Arakelots, St. P̊rkitch) dominated the panorama of the city of 1001 churches, symbolizing the glory of the Armenian State organization and that of its capital city of Ani.



ՀՈՒՇԱՐՁԱՆ

ՏԱՐԵԴԻՐՔ Ղ

Համակարգչային ձևավորումը՝ ԷԴԳԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ

Անգլերեն տեքստի թարգմանությունը՝ ԱՐՄԵՆՈՒՀԻ ՍԻՄՈՆՅԱՆԻ

Սրբագրիչ՝ ՍԱՀԱԿ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Ռուսերեն հոդվածների խմբագրումը՝ ԿԱՐԵՆ ԶՈՐՅԱՆԻ
ՏԱՏՅԱՆԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ
ԿԱՐԻՆԵ ՍԻՆԱՆՅԱՆԻ

Կազմի նկարները՝ Անիի մայր տաճարը
(վերակազմ. ԱՐՏԱԿ ՂՈՒԼՅԱՆԻ, 1-ին էջ)
Ծիծեռնավանք (վերջին էջ)

Տպագրությունը՝ օֆսեթ: Չափը՝ 84x108 1/16: Թուղթ՝ օֆսեթ:
Ծավալը՝ 24, 52 մամուլ: Տպաքանակը՝ 500:

«Հուշարձան» հրատարակչություն, 375010
Երևան, Փ. Բյուզանդի 1/3, հեռ. 56-92-38

Publishing House “Hushardzan”
1/3, P. Buzand st., Yerevan, 375010. Tel. 56-92-38

«ՍԻՄ ՏՊԱԳՐԱՏՈՒՆ»



«ՀՈՒՇԱՐՁԱՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 2005